ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-1914

ՎԱՆԻ, ԲԱՂԵՇԻ, ԿԱՐԻՆԻ, ՍԵԲԱՍՏԻԱՅԻ, ԽԱՐԲԵՐԴԻ, ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Մասշտաբ 1:25 000 1 սմ-ում 250 մ



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՍ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՑ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԳԱՌՆԱԿ ԵՎԵՍ Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅԱՌՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ (1912 թ.), ԻՆՉ-ՊԵՍ ՆԱԵԼԻ ԱԶԳԱՆՈՒՆԻ ՆԱՀ., ԿԱՐԻՆԻ ՄԱՐԶԻ ԵՎ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌԻ

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳ
(ամբողջությամբ)

3գվռ, 16գվղակ, 49 700 կմ²
Բնակչությունը՝ 630 000
Հայեր՝ 215 000 = 34,1 %
Թուրքեր՝ 240 000 = 38,1 %
Քրդեր՝ 75 000 = 11,9 %
Զազաներ՝ 30 000 = 4,8 %
Պարսիկներ՝ 13 000 = 2,1 %
Հույներ՝ 12 000 = 1,9 %
Այլ ժողովուրդներ՝ 45 000 = 7,1 %

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ
(առանց Հաքյարիի գվռ-ի)

2գվռ, 9գվղակ, 39 300 կմ²
Բնակչությունը՝ 350 000
Հայեր՝ 185 000 = 52,9 %
Թուրքեր՝ 47 000 = 13,4 %
Քրդեր՝ 77 000 = 22 %
Եզդիներ՝ 25 000 = 7,1 %
Ասորիներ՝ 18 000 = 5,1 %
Գնչուներ՝ 3 000 = 1 %

ԲԱՂԵՇԻ ՆԱՀԱՆԳ
(առանց Սղերդի գվռ. հր-ն մասի)

4գվռ, 13գվղակ, 27 150 կմ²
Բնակչությունը՝ 382 000
Հայեր՝ 180 000 = 47,1 %
Թուրքեր՝ 40 000 = 10,5 %
Քրդեր՝ 77 000 = 20,2 %
Զազաներ՝ 47 000 = 12,3 %
Ասորիներ՝ 15 000 = 3,9 %
Այլ ժողովուրդներ՝ 23 000 = 6 %

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳ
(առանց Մալաթիայի գվռ. հր. մասի)

3գվռ, 14գվղակ, 33 000 կմ²
Բնակչությունը՝ 450 000
Հայեր՝ 168 000 = 37,3 %
Թուրքեր՝ 102 000 = 22,7 %
Քրդեր՝ 95 000 = 21,1 %
Այլ ժողովուրդներ՝ 85 000 = 19 %

ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳ
(առանց Բշերիկի գվռկ-ի)

3գվռ, 11գվղակ, 37 500 կմ²
Բնակչությունը՝ 296 000
Հայեր՝ 105 000 = 35,5 %
Թուրքեր՝ 45 000 = 15,2 %
Քրդեր՝ 55 000 = 18,6 %
Ասորիներ՝ 60 000 = 20,3 %
Այլ ժողովուրդներ՝ 31 000 = 10,5 %

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
(առանց հս-արմ մասի)

4գվռ, 22գվղակ, 62 100 կմ²
Բնակչությունը՝ 507 000
Հայեր՝ 165 000 = 32,5 %
Թուրքեր՝ 192 000 = 37,9 %
Քրդեր՝ 50 000 = 9,9 %
Չերքեզներ՝ 45 000 = 8,9 %
Հույներ՝ 30 000 = 5,9 %
Ասորիներ՝ 25 000 = 4,9 %

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ 6 ՆԱՀ-ԵՐԻ
(Վիճակագրությունից դուրս մնացած սակավահայ տարածքներում հայ բնակչության թիվը՝ 145 000 մարդ):

Բնակչությունը՝ 2 615 000
Հայեր՝ 1 018 000 = 38,9
(Օսմ. կայսրությունում՝ 2 026 000)
Թուրքեր՝ 666 000 = 25,4 %
Քրդեր՝ 424 000 = 16,3 %
Ասորիներ՝ 123 000 = 4,7 %
Զազաներ՝ 77 000 = 2,9 %
Հույներ՝ 42 000 = 1,6 %
Այլ ժողովուրդներ՝ 265 000 = 10,2 %

* * *

ԿԱՐՍԻ ՄԱՐԶ

4 օկրուգ, 18 740 կմ²
Բնակչությունը՝ 391 000
Հայեր՝ 114 000 = 29,1 %
Թուրքեր՝ 79 200 = 20,2 %
Քրդեր՝ 60 400 = 15,4 %
Հույներ՝ 33 500= 8,6 %
Ռուսներ՝ 19 800= 5,1 %
Այլ ժողովուրդներ՝ 84 100 = 21,6 %

ՍՈՒՐՄԱԼԻՈՒ ԳԱՎԱՌ
(ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ)

Տարածքը՝ 3 582 կմ²
Բնակչությունը՝ 94 000
Հայեր՝ 31 000 = 32,9 %
Թուրքեր՝ 41 900 = 44,6 %
Քրդեր՝ 11 500 = 12,2 %
Եզդիներ՝ 10 000= 10,6 %

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
(ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ)

- Պետական սահմաններ
- Նահանգների(վիլայեթների) և մարզերի սահմաններ
- Գավառների(սանջակների) սահմաններ
- Հայ-թուրքական սահմանն ըստ Սկրի պայմանագրի (10.08.1920)
- Երկաթուղիներ
- ԱՐԴԱՀԱՆ — Փոքր քաղաքներ,ավաններ. մինչև 15 000 բնակիչ
- ԵՐԶՆԿԱ — Միջին քաղաքներ. 15 000 - 45 000 բնակիչ
- ԿԱՐԻՆ — Մեծ քաղաքներ. 45 000-ից ավել բնակիչ
- ⚓ ԽՈՓԱ — Նավահանգիստներ
- ԿԱՐԻՆ — Նահանգների(վիլայեթների) և մարզերի կենտրոններ
- ԵՐԶՆԿԱ — Գավառների(սանջակների) և օկրուգների կենտրոններ
- Տեկորի վ. — Վանքեր
- * 5165 Մ. Արարատ լ. — Լեռնագագաթներ
- Չինգլի լ-ա — Լեռնանցքներ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
(ՎԱՆ ՔԱՂԱՔ)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
1 - Ս.Թովիանենց(ավետ)
2 - Ս. Պողոս-Պետրոս
3 - Ս. Սահակ
4 - Ծիրանավոր
5 - Ս. Նշան (Առաքելորդաբան)
6 - Ս. Վարդան
7 - Ս. Տիրամայր

ՄԶԿԻԹՆԵՐ
1 - Ոլոր Ջամի
2 - Բերդի
3 - Խոտորջի Ջամի
4 - Դայա Ծելեբի Ջամի
5 - Սնանուն

ԹԵՐԴԱԼՊԱՐԻՍՊՆԵՐ

Ո ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴԱՐՊԱՍՆԵՐ
1 - Ավանցի(Իսկելե)
2 - Միջին
3 - Վարայի
4 - Թավրիզի
Ն ՆԱԽԿԻՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՇՏԵՎԱՅՐԸ
Դ ԴԱՏԱՐԱՆ
Ռ ՌՈՍԿԵՎԱՆՈՒՄ
Օ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԿ
Փ ՓՈՍՏ-ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ
1 - Շուշանյան Օրիորդաց
2 - Տղաների Յոլուսիայնի
3 - Քինվորական

Հայեր
Թուրքեր
Գնչուներ
Պետական հիմնարկներ
Խառնուրդներ

ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ-ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

IX դ. 2-րդ կես մ.թ.ա. - Արարատյան - Ուրարտական Սարդուր Ա թագավորը(845-825 մ.թ.ա.) հիմնեց թագավորության նոր մայրաքաղաք Տուշպա-Վանը:

908-1021թթ. - Վանը, որոշակի ժամանակահատվածում, Ոստանի հետ միաժամանակ՝ Արծրունիների Վասպուրականի թագավորության մայրաքաղաք:

1387թ.-26-օրյա հերոսական դիմադրությունից հետո Վանը գրավվեց Լենկթեմուրի զորքերի կողմից. բնակչության մի մասը բարբարոսաբար ոչնչացվեց, մյուս մասը գերեվարվեց և վաճառվեց Արևելքի ստրկավաճառանոցներում:

1820թ. ապր. 4- Վանում (Այգեստան) ծնվեց հայ ականավոր ազգային-հոգևոր գործիչ Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ): 1893 -1907 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս: Վախճանվել է 1907թ. հոկտ. 29-ին Էջմիածնում:

1872թ. Վանում ստեղծվեց «Միություն ի փրկություն» գաղտնի հայրենասիրական կազմակերպությունը:

1878թ. Վանում հիմնվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը(լեզալ թևը՝ Հայրենասերների միություն), որը հետագայում ստեղծված «Ճիվանիր» խմբի և Քաղաքական ակումբի հետ միասին մեծ դեր խաղաց «Արմենական» կուսակցության (հետագայում Ռամկավար-Ազատական) հիմնադրման գործում:

1885թ.- Հայ ազգային առաջին՝ «Արմենական» կուսակցության (ղեկավար՝ Մկրտիչ Ավետիսյան) հիմնումը Վանում: Կուսակցության գաղափարական կնքահայր Մկրտիչ Փորթուգալյան:

1896թ. հունիսի 3-9 - Վանի «Մեծ Դեպքը»: Հայ ազգային 3 կուսակցությունների մարտական ուժերի(Արմենական՝ Ս.Ավետիսյան, ՀՅՊ՝ Պետո, Ձեյթական՝Մարտին) հերոսական դիմադրությունը հանդիպաց ջարդարարներին: Հերոսամարտից հետո, Վանի 1000-յանի կորուստնումը Գարահիսար լեռան և Ս. Բարդուղիմեոս վանքի մոտ, որոնք ի պատասխան 1897թ. հուլ. 25-ին տեղի ունեցավ խաՍասորի փոխվրեժի հարթական արշավանքը:

1915թ. ապր. 7-մայ. 3 - Վանի հարթական հերոսամարտը բուրքական բռնապետության դեմ. հերոսամարտի դեկավարներ Արամ Մանուկյան, Բուլղարացի Գրիգոր, Արմենակ Եկարյան, Կայծակ Աղաթել, Հայկ Կոսյան: Մայ. 5-ի երեկոյան և հետագա օրերին քաղաք մտած ռուսական բանակի առաջապահ հայ կամավորական գնդերը:

1915թ. մայ. 7 - Ռուսական հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ: Նրա գլխավորած նահանգային վարչությունը, որը հայ ժողովրդի կողմից դիտվում էր որպես հայոց վերականգնվող պետականության սաղմ, գոյատևեց 72 օր՝ մինչև հուլիսյան աղետալի գաղթը:

1915թ. հուլ. 18 - Վանի Մեծ գաղթը: Ռուսական հրամանատարության կողմից պահանջով հապճեպորեն պարպվեց Վան-Վասպուրականը: Դեպի Արլ. Հայաստան շարժվող 200 000 -ոց հայ գաղթականությունը Բերկրիի կիրճում բորբական հրոսակախմբերի հարձակումների հետևանքով ունեցավ շատ ծանր կորուստներ: Մի քանի օր անց, ռուսական զորքերը վերադարձեցին, գրեթե առանց մարտի, թշնամուն հանձնված Վանը և շրջակա տարածքները...

1918թ. հունվ. 24 - Ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը լքելուց հետո կազմվեց Վան-Վասպուրականի փաստացի կառավարություն-Կոմիսարների խորհուրդ (9 հոգի). Կոստի Համբարձումյանի գլխավորությամբ:

1918թ. մարտի 21 - Արմ. Հայաստանի վերջին ազատ հողակտորի՝ Վան-Վասպուրականի անկումը: Եռանվաստ անհավասար և դաժան պայքարում ի վերջո տեղի տալով քանակապես և սպառազինությամբ մեծապես գերազանցող թշնամուն, Վան-Վասպուրականի ռազմական ուժերը և ժողովուրդը (27 000 հոգի) թողեցին Վանը, նախապես հրդեհելով քաղաքը: Վան-Վասպուրականի(Վ-Վ) Նահանգ-լյուրոցի սկիզբը:

1918թ. մայ. 4-5 - Վան-Վասպուրականի ռազմական ուժերի Սալմաստի Մայիսյան հերոսամարտը: Չախողվեց Ատրպատական ներխուժած թուրքական զորքերի(4-րդ կորպուսի 5-րդ դիվիզիա, 4 000 սվին) և քրդական հրոսակախմբերի լայնածավալ հարձակումը Սալմաստի վրա՝ այստեղ կուտակված գաղթականությունը ընաջնջելու նպատակով: Մեծ կորուստներով թշնամին ետ շարժվեց ելման դիրքերը:

1918թ. մայ. 31- հուլ. 5 - Վան-Վասպուրականի ռազմական ուժերի Սալմաստի Հուլիսյան հերոսամարտը: Հայ-ասորական միացյալ ռազմական ուժերի(4 000 հայ, 300 ասորի) վճռական, բայց անհաջող հարձակումը Խոյի ուղղությամբ՝ դեպի Նախիջևան-Ջանգեզուր ճնշելու նպատակով: Չկարողանալով հարձակվել թշնամուն մեծաքանակ թշնամուն(11-13 հազ. մարդ, 20 հրանոթ 12 գնդացիր) դիմադրությունը և տալով ծանր կորուստներ, Վ-Վ-ի գաղթականությունն ուղղվեց հարավ, անգլ. զորքերին միանալու համար:

1918թ. հուլ. 21 - Փոկության օրը, Վ-Վ-ի գաղթականությունը Սային-Կալա գյուղաքաղաքի մոտ հանդիպեց անգլիական բանակի առաջապահին: Նույն օրը, թուրքական զորաջոկատի հետ բախման ժամանակ զոհվեց Վ-Վ-ի Նահանգ-լյուրոցի ղեկավար, մեծ հայրենասեր Կոստի Համբարձումյանը:

1918թ. օգ. 1 - Հանձնվեց Սալմաստի հայաբնակ հատվածը: Ավարտվեց 133 օր տևած Վան-Վասպուրականի հերոսական դիմադրությունը: Այն, իր տեսակի մեջ և իր հերոսականությամբ, [illegible] մարտավարությամբ հայ ռազմական պատմության մեջ:

1920թ. Վան քաղաքը Թուրքիայի հանձնում Ճահճագի կենտրոնն է. բնակչությունը 280 000 մարդ (քրդեր՝ 80 , թուրքեր՝ 20):

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ (1914թ.)

ԱԴԱՆԱ - 60 000, որից հայեր 25 000 = 42 %
ԱԴԻՅԱՄԱՆ - 15 000, 6 000 = 40 %
ԱՂՐԻԱԼԱՊՈԼԻՍ- 110 000, 8 000 = 7 %
ԱԼԱՇԿԵՐՏ - 7 000, 5 000 = 71,5 %
ԱԼԵՔՍԱՆ - 12 000, 4 000 = 33 %
ԱԿԱՆ - 6 000, 1 500 = 25 %
ԱԿՆ - 20 000, 10 000 = 50 %
ԱՄԱՍԻԱ - 38 000, 15 000 = 39,5 %
ԱՅՍ - 5 000, 2000 = 40 %
ԱՅՍԹԱՊ - 60 000, 28 000 = 46 %
ԱՆԿՈՐԻ - 28 000, 11 000 = 37,5 %
ԱՆՏԻՊԻ - 23 000, 3 500 = 22 %
ԱՏԱԲԵԿԻՐ - 28 000, 12 000 = 42 %
ԱՐԱԲԿԻՐ - 18 000, 9 000 = 50 %
ԱՐԴՆԻ - 19 200, 4 500 = 44 % (ԱՐԴԱՆ)
ԱՖԻՈՆ ԿԱՐԱՀԻՍԱՐ - 27 000, 8 000 = 30
ԲԱՐԵՐԴ - 30 000, 10 000 = 33 %
ԲԱԼՈՒ - 10 000, 3 000 = 30 %
ԲԱՂԵՇ - 40 000, 14 000 = 35 %
ԲԱՅԱԶԵՏ - 5 000, 2 000 = 40 %
ԲԱԿԱՐԱ - 40 000, 8 000 = 20 %
ԲԵՅԵՆԻ - 12 000, 2 000 = 17 %
ԲԵՐԻ - 6 000, 5 600 = 93 %
ԲՐՈՒԱՆ - 75 000, 10 000 = 13 %
ԳՅՈՒՄՐԻՇԱԼԻՍ - 8 000, 2 500 = 31 %
ԴԻԱՐԲԵՔԻՐ - 40 000, 15 000 = 37,5 %
ԵԿԵՂԻՆ - 40 000, 15 000 = 37,5 %
ԵՐԶՆԿԱ - 40 000, 15 000 = 37,5 %
ԶԱՐԻ - 10 000, 6 500 = 65 %
ԶԵՅԹՈՒՆ - 30 000, հայեր 100 %
ԶՐԼԵ - 20 000, 5 000 = 25 %
ԶՍՅՈՒՌԻՆԻԼԻ - 350 000, 15 000 = 4,3 % (ԻԶՄԻՐ)
ԷՎԵՐԵԿ-ՖԵՆԵՆԵ - 12 000, 4 000 = 33 %
ԷՎԵՐԵԿ-ՖԵՆԵՆԵ - 20 000, 12 000 = 60 %
ԹԱԼԱՍ - 20 000, 7 000 = 35 %
ԹՈՍՈՒՐԶԱ - 14 000, 13 800 = 98,5 %
ԽԱՐԲԵՐԴ - 19 000, 10 000 = 53 %
ԽԼԱՅԹ - 4 500, 300 = 7 %
ԽՆՈՒՍ - 8 000, 2 500 = 31 %
ԽՈՐՋԱԼ - 10 600, 8 600 = 81,6 %
ԿԱՍԱԽ - 7 000, 500 = 7 %
ԿԱՍՍԱՐԿԱ - 12 000, 10 000 = 83 %
ԿԱՐԻՆ - 60 000, 15 000 = 25 %
ԿԱՍՏԵՄՈՒՆԻ - 30 000, 4 000 = 13 %
ԿԵՍՍԱՐԻԱ - 60 000, 20 000 = 33 %
ԿԻՐԱՆՈՒ - 16 000, 3 300 = 21 %
ԿՏՇՈՒՆԻ - 20 000, 14 000 = 70 %
ԿՈՒՄԱ - 40 000, 4 000 = 10 %
Լ. ԿԱՐՍ - 1 250 000, 150 000 < 12 %
ՄԱԼԱՏ - 39 000, 30 000 = 86 %
ՄԱԼԱՇԿԵՐՏ - 20 000, 360 = 2 %
ՄԱԼԱՅԻԱ - 45 000, 15 000 = 33 %
ՄԱՆԱԶԿԵՐՏ - 50 000, 7 000 = 14 %
ՄԱՐԱԾ - 70 000, 40 000 = 57 %
ՄԱՐԳԱՎԱ - 35 000, 17 000 = 48,5 %
ՄԵԶԻՐԵ - 16 000, 8 000 = 50 %
ՄԵՐԻՆ - 12 000, 3 500 = 19 %
ՄՈՒՇ - 25 000, 12 500 = 50 %
ՅՈՉՂԱՏ - 38 000, 12 000 = 32 %
ՆԵԿՈՍԵՂԻՍԻ - 27 000, 8 000 = 32 %
ՆԻՔՍԱՐ - 10 000, 3 000 = 30 %
ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ - 20 000, 7 300 = 39 %
ՋՄՇԿԱԾԱԳ - 3 600, 1 400 = 39 %
ՇԵՆԳԻՒՇ - 13 000, 10 000 = 77 %
ՉՈՐՔ ՄԱՐԶՎԱՆ - 20 000, 4 000 (ՏՅՈՒՄԻ ՅՈՒ) = 20 %
ՊԱՅԱՍ - 12 000, 5 000 = 42 %
ՌՈՂՈՍԱՆ - 25 000, 10 000 = 40 %
ՍԱՍՈՒՆ - 30 000, 6 000 = 20 %
ՍԵԲԱՍՏԻԱ - 60 000, 36 000 = 60 %
ՍԵՎԵՐԵԿ - 15 000, 8 000 = 53 %
ՍԻՒՆԻ - 15 000, 3 000 = 20 %
ՍԻՍ - 12 000, 8 000 = 67 %
ՍԻՐԻՐԻՍԱՐ - 20 000, 5 000 = 25 %
ՍՂԵՐԴ - 15 000, 6 000 = 40 %
ՍՊԻԱՐՍԻ (ԻՍՊԻՐԻՐ ԱՆ) - 12 000, 4 000 = 33 %
ՎԱՆ - 50 000, 28 000 = 56 %
ՎԵԶԻՐՔՈՓՐԻ - 6 000, 4 900 = 82 %
ՏԱՐՍՈՆ - 15 000, 4 000 = 27 %
ՏԻՎՐԻԿ - 12 000, 7 000 = 58 %
ՏՐՊՊԻԶՈՆ - 50 000, 15 000 = 30 %
ՏՐԻՊՈԼԻ - 10 000, 800 = 8 %
ՈՒԼԻԵ - 10 000, 1 500 = 15 %
ՈՒՐՖԱ - 100 000, 35 000 = 35 %
ՓԱՍԱՆ - 25 000, 3 000 = 12 %
ՓԱՐՍՍԱՆ - 21 000, 2 500 = 12 %
ՓԱՍՊ - 10 000, 7 000 = 70 %
ՔՈՒԼԻ - 30 000, 6 000 = 20 %
ՔԵՐԻ - 4 500, 3 150 = 70 %
ՔՅՈՒՇԱՀԻՍ - 30 000, 4 000 = 13 %
ՕՐԴՈՒ - 20 000, 5 000 = 25 %

* * *

ԱԽՍԱԼՅԻՍ - 24 000, 18 000 = 75 %
ԱԽՍԱԼՔԱԼԱՔ - 7 500, 6 700 = 89,3 %
ԱԼԵՔՍԱՆԴՐՊՈԼ - 51 300, 45 000 = 87,7 %
ԱՐՈՒԱՆՆ - 4 100, 2 100 = 51, 2 %
ԱՐԴԱՀԻՆ - 8 400, 6 400 = 76,2 %
ԲԱՅՈՒՄ - 38 600, 10 000 = 26 %
ԲԱՅՈՒՐ - 249 000, 57 000 = 22,9 %
ԳՈՐՐ - 25 700, 6 900 = 27 %
ԳՈՐԻԼ - 2 180, 1 700 = 78 %
ԴՈՒՇԵԹ - 2 200, 950 = 43,2 %
ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ - 56 300, (ԳԱԼՋԱԿ) 11 300 = 20,1 %
ԵՐԵՎԱՆ - 29 400, 15 500 = 52,7 %
ՋԱՔԱՅԱԼԱ - 4 000, 2 165 = 54,1 %
ԹԻՖԼԻՍ - 345 000, 130 000 = 37,7 %
ԻԳԴԻՐ - 10 000, 9 500 = 95 %
ԿԱՂԶՎԱՆ - 11 150, 8 500 = 76,2 %
ԿԱՐՍ - 30 100, 25 000 = 83 %
ՂՈՒՐԵԱ - 13 460, 780 = 5,8 %
ՕԼԹԻ - 3 260, 2 200 = 67,5 %
ՆԱԽԻՋԵՎԱՆ - 9 000, 2 650 = 29,5 %
ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ - 13 300, 12 700 = 95,5 %
ՆՈՒԽԻ - 54 700, 8 200 = 15 %
ՇԱՄԱԽԻ - 27 530, 40 100 = 14,9 %
ՇՈՒՇԻ - 42 600, 22 500 = 52,8 %
ՍՈՒՆԼԽ - 17 700, 9 000 = 50,8 %
ՍՈՒԽՈՒՄ - 46 530, 5 510 = 11,8 %

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳ(ՎԻԼԱՅԵԹ), ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊՈՆՏՈՍ ԵՎ ԿԱՐՍԻ ՄԱՐԶ

Քարտեզ - 2 Մասշտաբ 1:1 000 000 1 սմ-ում 10 կմ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Պետական սահմաններ
- Նահանգների(վիլայեթների) և մարզերի սահմաններ
- Գավառների(սանջակների) սահմաններ
- Երկաթուղիներ
- Խոշոր գյուղեր
- ԱՐՈՒԱՆ Փոքր քաղաքներ,ավաններ. մինչև 15 000 բնակիչ
- ԵՐԶՆԿԱ Միջին քաղաքներ. 15 000 - 45 000 բնակիչ
- ԿԱՐԻՆ Մեծ քաղաքներ. 45 000-ից ավել բնակիչ
- ԽՈՓԱ Նավահանգիստներ
- ԿԱՐԻՆ Նահանգների(վիլայեթների) և մարզերի կենտրոններ
- ԲԱՅՈՒՄ
- ԵՐԶՆԿԱ Գավառների(սանջակների) և օկրուգների կենտրոններ
- ԿԱՐԱՍՈՒ
- Ս. Նշան վ. Վանքեր
- 3451 Հարմաց լ. Լեռնագագաթներ
- Խաչի լ-ա Լեռնանցքներ

ԹՎԱՆՇՎԱԾ ԲՆԱԿԱՆ-ՎԱՅՐԵՐ ԵՎ ՎԱՆՔԵՐ

1. Վերամա
2. Ցիրգանա(Իսակսա)
3. Մայրանամա վ.
4. Կյուշանա
5. Կրոմիլա
6. Սաթես
7. Քուլունց
8. Մակրևինց
9. Խաչեպարտ վ. (Ս. Խաչիկ)
10. Վարիսա
11. Պղնձց
12. Փ.Խեյո
13. Ս.Խեյո
14. Փորուզ
15. Պատրիկյան
16. Խոցեվանց
17. Պարաքիլիսա (Սքաս)
18. Կարաքրտիրու
19. Շաբարին
20. Հարամկիկ
21. Նորլաքի վ.
22. Աղջանելիք (Խաչելիք)
23. Դարման (Թեմրան)
24. Արզուտ
25. Մելիքան
26. Ս.Դավիթ վ.
27. Վարիլեն (Վահանցեն, Վանշեն)
28. Ս. Գրիգոր Լուսավորիչ վ.
29. Անաթոսք Բզիկաց վ.
30. Սարիր(Սարեկ)

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՔԱՅԱՁԵՏԻ ԳԱՎԱՌ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌ

Քարտեզ - 6 Մասշտաբ 1:700 000 1 սմ-ում 7 կմ

ԵՐԶՆԿԱՅԻ ԳԱՎԱՌԱԿ

Քարտեզ - 3 Մասշտաբ 1:500 000 1 սմ-ում 5 կմ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՍԻ ՕԿՐՈՒԳ

Քարտեզ - 5 Մասշտաբ 1:500 000 1 սմ-ում 5 կմ

ԿԱՐԻՆԻ ԳԱՎԱՌԱԿ

Քարտեզ - 4 Մասշտաբ 1:500 000 1 սմ-ում 5 կմ

ՎԱՆԻ ԵՎ ԲԱՂԵՇԻ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ՎԻԼԱՅԵԹՆԵՐ)

Քարտեզ - 7 Մասշտաբ 1:700 000 1 սմ-ում 7 կմ

ՎԱՆ ԼԻՃ

Լոքսարի ծով, Ադի լիճ, Արզիշո ծով, Գալամեյաց ծով, Թանիրս լիճ, Խարիսայի ծով, Խոյթի լիճ, Ռոստմյաց ծով, Չաբիի երկրի վերին ծով, Վասապուրական ծով, Վարին արևելյան ծով, Տոսպա լիճ

Մակերեսը՝ 3760 կմ², ավազանը՝ 6000 կմ², առավելագույն երկարությունը՝ 125 կմ, առավելագույն խորությունը՝ 254, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720մ

ԹՎԱՆՇՎԱԾ ԲՆԱԿԱՆ-ՎԱՅՐԵՐ ԵՎ ՎԱՆՔԵՐ

1. Խաչբլուրցորուկ (Հակկոնտերիկ)
2. Լաճանա(Չեբերի-բաղ)
3. Սստվածածին(Նիրաք)
4. Սստվածածին վ.
5. Ցալկոլաղայք
6. Մոլլա-Խուգաս
7. Դավաթյոնի
8. Ս.Հարությունի վ. (Ստեփանոսատ)
9. Հասանկոս
10. Կորտկանց
11. Խաղդ
12. Ս.Հիպոքրատի վ.
13. Ս. Միսակ վ.
14. Կոտոնք(Կիրոնիս)
15. Ալիգլրոն
16. Դեղեանք
17. Մուհրաստուր
18. Ամիրջվանք
19. Խաղանմուկ
20. Ս. Ստեփան վ.
21. Ցեյնրլկ(Ձեյնջրցիք)
22. Բլրկան
23. Մարդ-Հիլգ
24. Ճախրկանք
25. Սպաղանք
26. Ս. Թոքը Մանուկ վ.
27. Արեգդիսն
28. Հորավան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Պետական սահմաններ
- Նահանգների(վիլայեթների) սահմանները
- Գավառների(սանջակների) սահմանները
- Երկաթուղիներ
- ՎԱՆ Մեծ քաղաքներ. 45 000-ից ավել բնակիչ
- ՄՈՒՇ
- ԲԱՐԵՇ
- ՄՈՒՇ
- ԳԵՏՆ

Քարտեզ - 8 ՄՈՒՇԻ ԵՎ ԲԱՐԵՇԻ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ 1.ԲԱՐԵՇ(ԲԱՐ) գլուխ-գավառակի մեծությունը 2.մեր. տարեթիվ 3. Ն.Ադամ Ղազանչեցի

Մասշտաբ 1:400 000 1սմ-ում 4 կմ

Քարտեզ - 9 ՎԱՆ-ՏՈՒՊԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՅՈՒՐԻ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ Մասշտաբ 1:500 000 1սմ-ում 5 կմ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ (ՎԻԼԱՅԵԹ), ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԳԱՎԱՌ(մասամբ),ՋԱՆԵԿԻՆ ԳԱՎԱՌ, ԱՆԿԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԳԱՎԱՌ (մասամբ) ԵՎ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՐԱՇԻ ԳԱՎԱՌ (մասամբ)

Քարտեզ - 10 Մասշտաբ 1: 900 000 1 սմ-ում 9 կմ


Ք. ՍԻՆՈՊ՝ 30կմ
ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԵՐԻՆ ԿԱՊԱԴՈԿԻԱ (ԽԵՌԿԼԱՊԱՏՈՒԼԻՍ)
ԳՅՈՒՄՐՈՒ-ՄԱՌԵՆ (ԳՅՈՒՄՐՈՒ-ՀԱՏԵՆ ԳԵՂ, ՍԻՍ-ՀԱՏԵՆ ԳՅՈՒՂ)
ՀԱՎԶԱ(ԽԱՎՍԱ)
ՄԱՐԶԱՆ
ԼԱՅՆԻ (ԼԱՅՆԵԼԻ)
ՍԱՄՍՈՆ (ՍԱՄՍՈՒՆ)
ՍՍՈՒՄԻ
ՀԵՐԵԿ (ԷՐԵԱՆ)
ՆԻԶԱՄԻ (ՆԵՌԿԵՍԱՐԻՍ)
ՄԵԼԵԹ(ՀԱՍԿԻՔԵ)
ՔԱՍՍԱԲԱ
ՋՐԼԵ(ՋԵԼԻ)
ԹՎԱՌԿԻՍ (ԹՈՔԱԹ)
ԿՈՆՏՈՒՐՍՈՒՄ
ԵՊՊԻՆ-ԶԱՐԱՀՍԱՆ
ՍՈՒՐԼՈՒԲԵՌԱ
ՏԵՐԽԱԼԻ (ԵԼՈԶԸ-ԷԼԻ)
ԶԱՐԱ
ՍԵԲԱՍՏԻԱ(ԽԱՎԶԱ)
ՈՒՐԻՖԱ
ԱՂՎԱՆ-ՄԱՌԵՆ
ԲՈՒԶԱՉԱՍՈՒՆ
ԵՐԻՆԼԵ
ՔԵՍՍԱՐԻԱ (ԿԱՅՍԵՐԻ)
ԱՍԱՐԻԱ (ԷԳԵՆ)
ՍԵՐԵՍԵԼԵ (ՍԵՐԵԿԼԻ)
ԹԱԼԱՍ
ՏԻՆԱՅՈՒԵՐ
ԻՆՍԵԼՈՒՄ
ԱՆԱՐՈՒՆԻԱ (ԱՍՏՈՒՌԻԱ)
ԷՎԵՐԵԿ-ՖԵՆԵՍԵԼԵ
ԴԵՎԵԼԻ-ԿԱՐԱՅԻՍԱՆ
ՍԱՄՍՈՆ (ՍԱՄՍՈՒՆ)
ՍԱՐԻԹԱ (ԹԵԲԱՍՍ)
ՇԱՐ (ԿՈՒՍԱՆ)
ՍԱՄՍՈՆ (ՍԱՄՍՈՒՆ)
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վարչական քարտեզ Մասշտաբ՝ 1: 600 000 1սմ-ում՝ 6 կմ

ՀՀ տարածքը՝ 29.8 հազ կմ²
բնակչության թիվը՝ 3.2մլն մարդ

ԼՂՀ տարածքը՝ 10.1 հազ կմ²
բնակչության թիվը՝ 145 հազ մարդ

ՀՀ ՄԱՐԶԵՐԸ

1. ՇԻՐԱԿ
2. ԼՈՌԻ
3. ՏԱՎՈՒՇ
4. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
5. ԿՈՏԱՅՔ
6. ԱՐԱԳԱԾՈՏՆ
7. ԱՐՄԱՎԻՐ
8. ԱՐԱՐԱՏ
9. ՎԱՅՈՑ ՁՈՐ
10. ՍՅՈՒՆԻՔ

ԼՂՀ ՇՐՋԱՆՆԵՐԸ

1. ՇԱՀՈՒՅԱՆ
2. ՄԱՐՏՈՒՆԻ
3. ԱՍԿԵՐԱՆ
4. ՇՈՒՇԻ
5. ՄԱՐՏՈՒՆԻ
6. ՀԱՂՈՒՐԻՔ
7. ՔԱՇԱԹԱՂ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Պետական սահմաններ
- Մարզային և շրջանային սահմաններ
- Միջպետական ավտոճանապարհներ
- Ներպետական(մարզային) ավտոճանապարհներ
- Երկաթուղիներ
- Ադրբեջանի կողմից օկուպացված ԼՂՀ տարածքներ

ԳՅՈՒՄՐԻ — 100 000 - 300 000 բնակիչ

ԵՐԵՎԱՆ — 1 000 000-ից ավելի բնակիչ

ԵՐԵՎԱՆ — Պետությունների մայրաքաղաքներ

ԱՐՄԱՎԻՐ — ՀՀ մարզային և ԼՂՀ շրջանային կենտրոններ

Վանքեր

Լեռնագագաթներ

Լեռնանցքներ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

- Գյուղաքաղաք — Մինչև 1 000 բնակիչ
- Գյուղական — 1 000 - 5 000 բնակիչ
- ԱԳԱՐԱԿ — 5 000 - 10 000 բնակիչ
- ՍԵՎԱՆ — 10 000 - 50 000 բնակիչ
- ԿԱՊԱՆ — 50 000 - 100 000 բնակիչ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ. «ՀԱՐՍԱՆԻՔ ԼԵՌՆԵՐՈՒՄ» ՕՊԵՐԱՑԻԱ-1992 թ. մայ. 8-16

«Նա, ով տիրում է Շուշիին տիրում է նաև Ղարաբաղին»

ԴՐՈ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԿՈՄԱՆԴՈՍ — ԱԻՈՒ

- ԱԻՈՒ-ի Գլխ. հրամանատարության զորակայանը Շուշիի ազատագրման նախօրեին և ընթացքում (մայ. 2-9)
- Օպերատիվ ուղղություններեր հրամանատարական կետերը
- Հայկական ուժերի գրաբարժրերը օպերացիայի նախօրեին և ընթացքում
- ԱԻՈՒ-ի հարձակողական գործողությունները մայ. 8-12-ին
- ԱԻՈՒ-ի հարձակողական գործողությունները մայ. 13-16-ին
- Ադրբեջանական ուժերի պաշտպանական դիրքերը
- Ադրբեջանական ուժերի հակահարվածները
- Շուշիի կայազորի և ադրբեջանական այլ ուժերի նահանջ-փախուստը
- Լիսագոր 16.V.1992 — Արցախյան բնակավայրերի ազատագրման ամսաթվերը
- 2724 Մ. Քիրս լ. — Լեռնագագաթներ և բարձունքներ
- Ավտոխնդուղիներ
- Շուշիի Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ եկեղեցի

ՄԱՍՇՏԱԲ 1: 60 000 1սմ-ում 600 մ

Շուշիի ազատագրման օպերացիան թե՛ ռազմական և թե՛ բարոյահոգեբանական առումներով Արցախյան Ազատամարտի կարևորագույն օպերացիան է, որի իրականացումով լուծվեցին ռազմական իրադրությամբ թելադրված երկու խիստ կարևոր ստրատեգիական խնդիրներ: Նախ գրավվեց Արցախի դեմ ադրբեջանական ագրեսիայի գլխավոր պլացդարմ Շուշին, և ապա հնարավոր դարձավ Լաչին քաղաքի ու Լաչինի միջանցքի գրավումով(1992թ. մայ. 18) ուղղակի ցամաքային կապ հաստատել ՀՀ-ի հետ, առանց որի Արցախը դատապարտված էր պարտության:

«Հարսանիք լեռներում» օպերացիայի պլանը մշակվել է Արցախի ինքնապաշտպանության ուժերի(ԱԻՈՒ) հրամանատարության(գլխ. հրամ.՝ Կոմանդոս-Արկադի Տեր-Թադևոսյան, շտաբի պետ՝ Ֆելիքս Գաղոյան) կողմից, 1992թ. մարտին և ընդհուպ մինչև իրականացումը լրացվել է ու ճշգրտվել: Պլանի և՛ մշակման և՛ իրականացման գործում հատկապես մեծ դեր է խաղացել Կոմանդոսը:

Օպերացիայի մեջ ներգրավված հակառակորդ կողմերի ուժերն ու միջոցները հետևյալն են: Կենդանի ուժ. ԱԻՈՒ՝ մինչև 2 500 մարդ, ազերիներ՝ նույնքան, որից 1 200-ը Շուշիում: Հրետանու գծով(ներառյալ «Գրադ» հրթիռային կայանները) կար հակառակորդի փոքր առավելություն. հայեր՝ 9, ազերիներ՝ 11: Զրահատեխնիկայի գծով հակառակորդն ուներ մեծ առավելություն. հայեր՝ 10 միավոր, ազերիներ՝ 17: Օդուժի(ազերիներ՝ մեկ ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռ և չորս ՄԻ-24 «Կրոկոդիլ» մարտական ուղղաթիռներ, հայեր՝ 0) և զինամթերքի գծով հակառակորդն ուներ բացարձակ գերազանցություն:

Օպերացիան սկսվել է մայ. 8-ին, ժ. 2:30-ին հայկական հրետանու(հրամ. Լեոնիդ Մարտիրոսով, փոխհրամ.՝ Ժորա Գասպարյան) 40-րդապանոց արդյունավետ հրետանային նախապատրաստությամբ, որից անմիջապես հետո՝ ժ. 4:00-ի սահմաններում հարձակման են անցել ԱԻՈՒ-ի հարվածային խմբավորումները: Հարձակումն ընթացել է 4 օպերատիվ ուղղություններով՝ Քյոսալարի, Շոշի, Հյուսիսային(Ստեփանակերտի) և Հարավային(Լաչինի):

Քյոսալարի ուղղությամբ գործող հայկական հարվածային խմբավորումը(400 հոգի, հրամ. Սեյրան Օհանյան), գլխավոր պահեստազորի(160 հոգի, հրամ. 26-ի Յուրա-Յուրա Հովհաննիսյան, Հրազդանի ջոկատ-Սասուն Միքայելյան, Սևանի ջոկատ-Սուրեն Սարգսյան, «Սասունցի Դավիթ» ջոկատ-Մարատ Խաչատրյան, Ստեփանավանի ջոկատ-Հրաչ Շահվերդյան, այլ ուժեր) օգնությամբ մայ. 8-10-ի կատաղի մարտերից հետո գրավել են Զանհասանը, Քյոսալարը, Բաշքենդը և Ջավաղլարը, իսկ այնուհետև(մայ. 14-16) Շուշիից արևմուտք և հարավ-արևմուտք ընկած հակառակորդի 17 գյուղերը: Մայ. 16-ի կեսօրին գրավվել է Լիսագորսկը: Քյոսալարի ուղղության հյուսիսային թևում գտնվող Լեսնոյե և Կարագաֆ ամրոցված հենակետերը մայ. 11-12-ին գրավվել են Բադարայի վաշտի(հրամ. Կարեն Արզումանյան) կողմից:

Շոշի ուղղությունը(400 հոգի, հրամ. Ազո-Արկադի Կարապետյան, փոխհրամ. Դուշման- Վարդան Ստեփանյան) բնական և արհեստական արգելքների առումով(Կարկառի ձոր, Շուշիի բերդապարիսպներ) ամենադժվարինն էր: Մայ. 8-ին Շոշի խմբավորումը(1-ին վաշտ-Բեկոր Աշոտ(Ղուլյան), Շոշի ջոկատ-Արգամ Հարությունյան, Դուշման Վարդանի ջոկատ, Արարատի ջոկատ-Գրիգոր Գրիգորյան, Սասնձին հետախուզական խումբ-Ռուբեն Բարսեղյան, [illegible] ջոկատ, այլ ուժեր) գրոհել է Շուշիս [illegible] արևելքից: Դեռևս մայ. 8-ի մութ ու ուսապարկի Բեկոր Աշոտի ուժերը(ԱԻՈՒ-ի 1-ին վաշտ և կցված ուժեր) գրոհելով Շուշիի բերդի կարևորագույն մասը հանդիսացող Շուշիի բանտը՝ ներխուժել են քաղաք:

Հյուսիսային ուղղությունը(650 հոգի, հրամ. Վալերի Չիթչյան) Շուշիի գրոհի գլխավոր ուղղությունն էր: Մայ. 8-ին Ստեփանակերտ-Շուշի խճուղու երկայնքով և Կրկժանի կողմից հայկական ուժերը(4-րդ վաշտ-Գագիկ Սարգսյան, 6-րդ վաշտ-Սերգեյ Թովմասյան, 8-րդ վաշտ-Մարտիկ Գասպարյան, 9-րդ վաշտ-Միքայել Լալայան, Անկախության Բանակ-Արթուր Մալխասյան, այլ ուժեր) գրոհել և կեսօրին մոտ մոտեցել են քաղաքին: Այս ուղղությամբ Շուշի առաջին մուտք է գործել ԱԻՈՒ-ի 4-րդ վաշտը: Մինչև մայ. 8-ի կեսգիշեր բերդաքաղաքը լիովին մաքրվել է թշնամուց: Շուշիի անկմանը որևէ կերպ չկարողացավ խոչընդոտել նաև ադրբեջանական օդուժի ակտիվ գործողությունները:

Հարավային ուղղությամբ(820 հոգի, հրամ. Սամվել Բաբայան) գործել են 3 հիմնական խմբավորումներ. ՀՀՊ վաշտ(170 հոգի, հրամ. Ժիրայր Սեֆիլյան), 3-րդ վաշտ և կցված ուժեր(130 հոգի, հրամ. Սև Աշոտ-Աշոտ Խաչատրյան), Աֆղանցիների ջոկատ և կցված ուժեր(140 հոգի, հրամ. Նվեր Չախոյան): Մայ. 8-ին հայկական ուժերը դեպի Վ. Զարիսլուլ և Մեծ ու Փոքր Քիրս լեռներն ուղղված իրենց արդյունավետ գործողություններով իրական սպառնալիք են ստեղծել Շուշի-Լաչին ստրատեգիական խճուղուն՝ դրանով իսկ նպաստելով Շուշիի ադրբեջանական կայազորի դիմադրողականության կտրուկ անկմանը: Մարտերի ընթացքում զգալի կորուստներ են պատճառվել այդ տարածքում գտնվող և Շուշիից նահանջող հակառակորդի ուժերին, մասնավորապես 12-ժամյա մարտից հետո 3-րդ վաշտի կողմից ջախջախվել է Փ. Քիրսի ստորոտում գտնվող թշշնամու խոշոր ռազմակայանը: Հարավային ուղղությամբ հիմնական ուժերից դեպի հյուսիս գործող Քարինտակի խրամբավորումը(Քարինտակի ջոկատ և կցված ուժեր՝ ավելի քան 100 հոգի, հրամ. Արթուր Առաքելյան) մայ. 8-ին օրվա ընթացքում հակառակորդից մաքրել է Շուշիի հարավային մատույցները. առավոտյան ժ. 8-ին գրավվել է ուժեղ հենակետի վերածված Ն. Զարիսլուլ(Նաբիլար): Ըստ այդմ հակառակորդը կրել է մեծ կորուստներ:

Շուշիի անկումից հետո՝ մայ. 12-ին, Վ.Զարիսլուլի տակ հակառակորդի խոշոր ուժերը(Շուշիի նախկին կայազորը) զրահատեխնիկայի աջակցությամբ ձեռնարկեցին հուսահատ, բայց վտանգավոր հակահարձակում Շուշիին վերադարձնելու նպատակով: Հայկական ուժերը(ՀՀՊ վաշտի հիմնական ուժեր, Քարինտակի և Ավետարանոցի ջոկատներ) 4-5 ժամյա կատաղի մարտից հետո, թշնամուն ծանր պարտության մատնելով նույն օրը գրավեցին Վ.Զարիսլուլ: Մարտը ղեկավարում էր ՀՀՊ Հրազդանի ջոկատի հրամ. Ալբերտ Ալավերդյանը:

Շուշիի օպերացիայի հաղթական ավարտից անմիջապես հետո՝ մայ 17-ին, գրեթե առանց մարտի հայկական ուժերը ազատագրեցին Բերդածորի ենթաշրջանը, իսկ հաջորդ օրը հաղթական երթով մուտք գործեցին ազերիների կողմից արդեն լքված Լաչին քաղաքը և դուրս եկան ՀՀ-ի պետական սահմանը Տեղ-Կոռնիձոր հատվածում: Մայ. 19-ի առավոտյան Ֆաթալիփեյսի վրայով դեպի հարավ առաջացող հայկական առաջապահ ուժերը մտան Մալխալաֆ և Մազռլու:

Շուշիի գրավումից անմիջապես հետո՝ մայ. 10-12-ին, հակառակորդը ձեռնարկեց լայնածավալ հարձակում ԼՂՀ-ի ողջ արևելյան սահմանի երկայնքով և մասնավորապես Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ գլխ. ստրատեգիական ուղղությամբ, որը սակայն ոչ մի արդյունք չտվեց:

Կողմերի կորուստները Շուշիի օպերացիայի ընթացքում. ԱԻՈՒ՝ մինչև 50 սպանված և 250 վիրավոր, ազերիներ՝ 200-300 սպանված և 600-700 վիրավոր: Գրավվեց հարուստ ռազմավար՝ զրահատեխնիկա, հրետանի և տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև հսկայական քանակությամբ ռազմամթերք:

«Հարսանիք լեռներում» օպերացիայում սպառազինության գծով հակառակորդի մեծ առավելության պայմաններում [illegible] ուժերի տարած փայլուն հաղթանակն արդյունք էր նախ և առաջ հայկական հրամանատարության կողմից օպերացիայի մշակման ճախապատրաստման և իրականացման գործում ադրբեջանական հրամանատարության հանդեպ ունեցած անվիճելի գերազանցության: Այուսև ոչ պակաս կարևոր հանգամանքը մարտական որակների և հատկապես բարոյահոգեբանական առումով հայ ազատամարտիկի՝ ազերի ասկյարի հանդեպ ունեցած հսկայական առավելությունն էր:

Շուշիի օպերացիայում Ադրբեջանը կրեց ռազմական և հատկապես հոգեբանական այնպիսի ջախջախիչ պարտություն, որից նա ի վիճակի չեղավ ուշքի գալու արցախյան պատերազմի հետագա 2 տարիներին, չնայած այդ ընթացքում ունեցած տակտիկական և նույնիսկ ստրատեգիական բնույթի ժամանակավոր հաջողություններին:



Շուշիում 1000-ամյա ոսոխի դեմ վարված Հաղթանակի Զահը, մարտական էստաֆետով երբևէ հասցվելու է մինչև վերջ՝ մինչև Ադանա: